

բառին գ-ը հնդեւրոպական *gh-*էն լինի, ս-
րովհետեւ այս պարագային՝ քմականի պիտի
վերածուէր. եթէ բառն հնդեւրոպական է,
գ-ը *W* միայն կրնայ ներկայացնել: Եւ ար-
դարեւ զեղծ՝ փափաք կը թուի լատ. *uolo*
և *յն*. *ἐέλπομαι* և *ἐέλδομαι* բառերու ար-
մատակից. ընդարձակումը միայն կը տար-
բերի, հայն ունենալով *gh*, մինչ յոյնն
ունի *π* և *δ*: — Էջ 454, լսեմ-ի ս-ն կը
համապատասխանէ Մնս. *eloka-*ի *k*ին. *ka*
մասնիկը նախնական չէ, ուստի Մնս. *k*
պէտք է համեմատել նախնական ընդարձակ-
ման մը հետ. ընդհակառակը լիթ. *klausau*
ունի *s* ընդարձակումը. հմմտ. հայ. *լռայ*:
— Էջ 474, մագիլ գործ չունի ծոց բա-
ռին հետ՝ որուն հետ համեմատելի է եղառնգե
(Grammont, Dissimilation Cons. էջ 74):
— Էջ 473, իբրեւ օրինակ *dw-*է ծագած
հայ. *կ-ի* կարելի է գնել նաեւ մեղի, **meldwi*,
ինչպէս լատ. *mollis** **moldwis*-էն. հմմտ.
ինչ որ կ'ըսէ Հիւբշ. յէջ 445 երկոչ բառին
վրայ: — Էջ 478, Սանս. աւնա բունը գոր
Հիւբշ. կը յիշէ հայ. *ն-ին* և լիթ. *անս-ին*
հետ՝ բոլորովին տարբեր իմաստ ունի. ա-
բունին գործիականին համար միայն կը գործ-
ածուի, և անշուշտ կը ծագի պարզապէս
նախկին աւնա գործիականէն: Նոյն էջ՝ կը
թուի թէ նիստ բառին մէջ պահուած նի-
մասնիկը ուրիշ բառերու մէջ եւս կը գտնուի.
հմմտ. *նայիլ* և *հայիլ*, *յեկոռ* և *նեցռակ*:
— Էջ 484, ոչք **ուպոտ-էն* (աղաւաղութիւն
**ուկոտ-ի*) կանոնաւոր է. քուն չկրնար գալ
ոչ **սեպկո*, ոչ ալ **սոչպկո* ձեւէ, այլ
միայն **սոչպկո-էն* և կը ներկայացնէ նոյն
փոփոխութիւնը. ուրիմն պ զարձած է ոչ՝
հնդեր. *սա-*ի հայ. *ոյ-*ի վերածուելէն հոք
միայն: — Էջ 497 Մնս. *դրապուս* ի (կաթիլ)
դ-ն հին *dh* չէ. հմմտ. *Wackernagel. Alt-*
ind. Gramm. Ա. 242:

Բաւական երկար ցուցակ մը կը պարու-
նակէ, սրբազրութիւններ և յաւերաւծներ
զբքին Ա. մասին վրայ՝ որ անցեալ տարի
հրատարակուեցաւ: Կայ նաեւ կատարեալ
ցանկ մը հայ և ուրիշ հնդեւրոպական լե-
զուաց համեմատեալ բառերուն. պը. Հիւբշ.
իրանեան, ասորական և յոյն փոխառութիւն:

նորուն ցանկը չէ դրած՝ զբքին ծաւալը չընդ-
արձակելու համար. սակայն ցաւալի է այս՝
զոնէ իրանեան փոխառութիւններուն համար,
որոնք շատ անգամ հնազոյն ձեւը կը ցուցնեն:

Բոլոր ընթերցողը պիտի փափաքէ որ
պը. Հիւբշման երկար չապասեցնէ այսքան
անհրաժեշտ զբքի մը շարունակութիւնը:

A. MEILLET

ԿԵՆՏԱՆԱԲԱՆ

ԱՐՐԱՀԱՄ ԲԱՀԱՆԱՅ Կ. ՊՈԼՍԵՑԻ

(Շար. և վերջ, տես յէջ. 66)

ՈՁՆՈՑ բաժինը փակէ Աբրահամ
առասպելեալ հոկայ հաւով մի, որ
կոչուի թուրքարէն «Սիմուրք. ամեն
« թոչնոցն մեծ է և ահագին կու լինի.
« ասեն, թէ որպէս ճայեկն դմուկն՝ ի-
« ջանէ ի բարձանցն և առնու, այնպէս
« Սիմուրքն զփեղն՝ ի բարձանց իջանէ և առ-
« նու (!): Այնմ ժամանակին (Եբք) շէն և
« մարդաբնակ տեղիքն կու բնակէր, ասեն.
« Ագամայ և որպոցն շատ զեն հասուց. օր
« մի հարս մի տանէին բարձեալ սայլիւ. և
« Սիմուրքն ի վերուստ իջեալ՝ սայլիւ վե-
« բացուց հարսն, և տարեալ հեռաւոր լե-
« բանց վերայ եղեր: Այնմ ժամանակին
« նահապետքն Աստուծոյ խնդրեցին ազօթիւք,
« թէ, Տէր Աստուած, քոյին հրամանաւ
« երթայ Սիմուրքն ի Օման կղզին, և այլ
« չերեւի (ի) բնականութիւն մեր. և Աս-
« տուծոյ հրամանաւն այնպէս եղեւ: Եւ կայ
« ի կղզին այն մեծամեծ փեղք և միեղջիւրքն
« և ահագնատեսիլ գոմէշքն, և այլ սոյնպի-
« սի պատառողք գաղաւթ և թռչունք շատ
« կու լինին. ապա Սիմուրք էնոնցմէն չի
« վախենար և զեն չի աներ. զիսէ որ ա-